Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

# Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում

ԵՄ ֆինանսավորմամբ և ՄԱԱԶԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագիր

## Տեղեկագիր

Թիվ 20

2025թ. դեկտեմբեր

# Դեկտեմբեր ամսվա ընթացքում գրանցված հաջողությունները

Դեկտեմբերը շրջադարձային ամիս էր Հայաստանի որակի ենթակառուցվածքի և չափագիտության համակարգի զարգացման համար: Իրավական և ինստիտուցիոնալ զարգացումներից մինչև միջազգային համագործակցություն, կարողությունների զարգացում և նոր լաբորատոր սարքավորումների տրամադրում. ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում որակի ենթակառուցվածքներին» ծրագրով ՄԱԱԶԿ-ն շարունակեց ԱՐՄՍՏԱՆԴԱՐ-ին չափումների հուսալիության ամրապնդման, միջազգային ճանաչման և եվրոպական և համաշխարհային ստանդարտներին համապատասխանության հարցում:

## «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք

Դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության նախագահը ստորագրել է «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը, որը դեկտեմբերի 2-ին պաշտոնապես հրապարակվել է:

Այս կարևոր քայլը նպաստում է Հայաստանի չափագիտական համակարգի ամրապնդմանը և դրա համապատասխանեցմանը եվրոպական ու միջազգային չափանիշներին՝ ապահովելով չափումների վստահելիությունը, արդար առևտուրը և միջազգային ճանաչումը:

## Սահմանադրական դատարանի որոշումը չափագիտության միջազգային կազմակերպություններին անդամակցության վերաբերյալ

Դեկտեմբերի 23-ին ՀՀ Սահմանադրական դատարանն որոշում է կայացրել «Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM)» ասոցացված անդամ դառնալու մասին» և «Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML)» թղթակցային անդամ դառնալու մասին» համաձայնագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրական համապատասխանության վերաբերյալ: Դատարանը որոշել է, որ այդ պարտավորությունները լիովին համապատասխանում են Սահմանադրությանը:

Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## Սարքավորումների տրամադրում ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի Անկյունագծային (երկարություն) լաբորատորիային

Դեկտեմբերին ՄԱԱԶԿ-ը սարքավորումներ է տրամադրել Ազգային ստանդարտների և չափագիտության մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) անկյունագծային (երկարությունների) լաբորատորիային:

ՄԱԱԶԿ-ի միջազգային փորձագետը այցելել է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ՝ աջակցելու սարքավորումների տեղադրմանը և ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի մասնագետների համար անցկացնելու գործնական դասընթաց: Տրամադրված սարքավորումները կուժեղացնեն լաբորատորիայի տեխնիկական կարողությունները և կնպաստեն չափումների ճշգրտության, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:



# Հայ մասնագետների օրենսդրական չափագիտության ոլորտում գիտելիքների խորացման նպատակով՝ ՄԱԱԶԿ-ը կազմակերպեց ուսումնական այց Չեխիայի Հանրապետություն

2025 թվականի դեկտեմբեր 8-12, ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի որակի կառավարիչը, գլխավոր չափագետը և Իոնիզացման չափումների լաբորատորիայի ղեկավարը ուսումնական այցով գտնվում էին Չեխիայի Հանրապետությունում: Չեխիայի չափագիտության ինստիտուտի (CMI) հետ համագործակցության արդյունքում իրականացված այցի նպատակն էր ամրապնդել մասնակիցների ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունները՝ չափիչ սարքերի մասին 2014/32/EU կանոնակարգի (MID), մասնավորապես՝ ավտոմատ կշռման սարքերի (AWI – MI-006), ինչպես նաև ոչ ավտոմատ կշռման սարքերի մասին 2014/31/EU դիրեկտիվի (NAWID) կիրառման ուղղությամբ:

Տեսական ուսուցում, լաբորատոր այցեր և պրակտիկ վարժություններ ներառող ծրագրի շրջանակում մասնակիցները ծանոթացան համապատասխանության գնահատման ընթացակարգերին, կշեռքների էլեկտրամագնիսական համատեղելիության (EMC) և էլեկտրական փորձարկումներին, ինչպես նաև բեռնատարների կշեռքների, խանութային կշեռքների և վերահսկիչ կշռման սարքերի գործնական փորձարկումներին: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց ԵՄ դիրեկտիվների, համապատասխանեցված ստանդարտների և OIML փաստաթղթերի գործնական կիրառմանը, ինչպես նաև համապատասխանության գնահատման իրական սցենարների վրա հիմնված խնդիրների լուծմանը: Ուսումնական այցը կարևոր քայլ է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի և Չեխիայի չափագիտության ինստիտուտի միջև համագործակցության խորացման, ինչպես նաև Հայաստանի օրենսդրական չափագիտության համակարգի հետագա զարգացման ուղղությամբ:

# ՄԱԱԶԿ-ն աջակցեց ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի էլեկտրական տրամաչափարկման լաբորատորիայի կարողությունների զարգացմանը – դեկտեմբերի 15-19, 2025թ.

ՄԱԱԶԿ կազմակերպեց հնգօրյա դասընթաց՝ ուղղված Ազգային ստանդարտների և չափագիտության մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) էլեկտրական տրամաչափարկման լաբորատորիայի արդյունավետության բարձրացմանը, առաջիկա ստուգայցերին նախապատրաստմանը և տրամաչափարկման ծառայությունների շրջանակի հնարավոր ընդլայնմանը:

Հիմնվելով նախկինում անցկացված քննարկումների վրա՝ դասընթացի ընթացքում հստակեցվեցին միջազգային հավատարմագրման գործընթացի հետագա քայլերը:

Դասընթացի ընթացքում ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի մասնագետները քննարկեցին երկկողմ և միջլաբորատոր համեմատությունների (BILC/ILC) պլանավորումն ու կիրառումը՝ հավատարմագրման գործընթացն ամբողջությամբ ապահովելու նպատակով: Անդրադարձ կատարվեց BILC/ILC-ների դերին՝ որպես որակի վերահսկողության արտաքին գործիքների, ինչպես նաև տրամաչափարկման լրացուցիչ ծառայությունների վավերացման արդյունավետ միջոցների:

Այս նախաձեռնությունը կարևոր հանգրվան է Հայաստանի որակի ենթակառուցվածքի զարգացման ճանապարհին: Այն ամրապնդում է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի դերը՝ որպես միջազգայնորեն ճանաչված տրամաչափարկման ծառայությունների հուսալի մատակարարի, և աջակցում է Հայաստանի չափագիտության ոլորտի շարունակական համապատասխանեցմանը եվրոպական չափագիտության համակարգերին՝ ԵՄ–ՀՀ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) շրջանակում:

## Ծրագրի մասին

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրն իրականացնում է ՄԱԱԶԿ-ը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի կարողությունները՝ շահառուներին միջազգայնորեն ընդունելի չափագիտական ծառայություններ մատուցելու համար: Հայաստանի չափագիտության համակարգի իրավական, կառուցվածքային եւ տեխնիկական կարգավորումների բարելավման միջոցով ծրագիրը նպաստում է համակարգի արդիականացմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացիան եւ առեւտրի մրցունակության բարձրացումը, ինչը համահունչ է ԵՄ-ի հետ ստորագրված «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

## Ծանոթագրություն

Ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից: Այս տեղեկագրի բովանդակության պատասխանատուն բացառապես հեղինակներն են եւ այն կարող է չարտահայտել Եվրոպական միության եւ ՄԱԱԶԿ-ի տեսակետները: Այս տեղեկագիրը հրապարակվել է «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Տեղեկագիրը պատրաստվել է առանց Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական խմբագրման:

## Ծրագրի արդյունքները (2025թ. դեկտեմբեր)

**ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի 7 աշխատակցի** վերապատրաստում կարողությունների զարգացման դասընթացների արդյունքում

**5,281 դիտում և 1,647 ներգրավվածություն** սոցիալական մեդիայի հարթակներում հրապարակումների արդյունքում

**857 հետևորդ** ծրագրի սոցիալական մեդիայի հարթակներում

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝
Ծրագրի ղեկավար Ցոնգ Վուին՝ C.WU@unido.org
Ծրագրի համակարգող Հայաստանում Մանե Թափալցյանին՝ m.tapaltsyan@unido.org

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Նորությունների համար հետևեք մեզ՝